

մար. վերեւ պարզուած տօնակատարութեան մը տարրեր ժամանակի մէջ գործադրուելուն հետեանքով հաւանական կը նկատենք որ Սափսայի Ս. Յովհաննու Նախնական եկեղեցին Հայոց յատկացուած էր իրր վանք, և այն աւերակը որուն Հայերը 1813ին կ'աւանդէին Բ. Դրան մատուցած իրենց յիշատակագրին մէջ՝ Սափսայի վանքին տեղւոյն աւելի կը յարմարի վերեւ մէջ բերուած տուիքներուն համաձայն:

Սափսան կը գտնուի, Մատապայի ծանօթ մոզայիք քարտէսին համաձայն, Յորդանանի անդիլի կողմը, Քարրար օժանդակին վրայ: Սափսան ճիշդ գիմացն է Յունաց Յովհաննու վանքին և քովը ունի Գորրատայի վանքը զոր վերեւ յիշեցինք: 1902 ին Երուսաղէմի Ս. Աննայի վանքին մեծաւորը Հ. Ֆէտէրլէն աշակերտներով հնախօսական շրջադայութիւն մը կատարած է Սափսա և մերձակայ տեղերը: Սափսայի գետնին վրայ գտած է աւերակներ, վանքին կարծր քարէ սեամփն երկու մասերը, երկու կողմերով ծակեր բացուած, մոզայիքի կտորներ, բիւզանդական ժանգոտած երկու զրամներ, 800-1000 քառակուսի մէթր տարածութեան մը վրայ շէնքերու հետքեր, և այլն: Յիշեալը կը յարէ թէ՛ եթէ պեղումներ կատարուին կարելի է հանել վանքին յատակագիծը, (S^h u La Terre Sainte, 1902): Ուրիշ մէկ պաղեստինագէտ մ'ալ, Barnabé Meistermann, կը գրէ թէ Սափսայի աւերակները յայտնապէս կ'ապացուցանեն Կաղանկայտուացիին մէջ յիշատակուած Հայոց Ս. Յովհաննէս Մկրտչի վանքին գոյութիւնը (Nonveau Guide de la Terre Sainte, էջ 275):

Այս և ուրիշ աւերակներու մէջ կատարուած պեղումները և հետազոտութիւնները տնտարակոյս երեւան պիտի բերեն յիշատակարաններ՝ որ առաւելապէս պիտի հաստատեն այս վանքերուն ազգային հանգամանքը, բացատրելով պատմութեան անորոշ մնացած կէտերը և պարզելով մոռցուած անցեալը՝ որուն մէջ աւաճ, շատ արժէքներ անյայտ կը մնան:

